ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Տարոն Սիմոնյանի,

մասնակցությամբ Նիկոլայ Բաղդասարյանի և նրա ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Լուսինե Սահակյանի և Երվանդ Վարոսյանի,

քննության առնելով փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի փաստաբանական գործունեության թիվ 95 արտոնագրի գործողությունը կասեցնելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Հարցի քննարկման նախապատմությունը.</u>**

Նիկոլայ Բաղդասարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.06.1998 թվականին:

«Նիկոլայ Բաղդասարյանին վարչապետի խորհրդական նշանակելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի 27.06.2018թ. թիվ 845-Ա որոշմամբ Նիկոլայ Բաղդասարյանը նշանակվել է **Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական՝ հասարակական հիմունքներով:**

20.07.2018 թվականին փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին ուղարկվել է Պալատի աշխատակազմի ղեկավարի թիվ 05/04/1044-18 գրությունը, որով Նիկոլայ Բաղդասարյանին հայտնվել է, որ 2018 թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ մտած և ներկայումս գործող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի մի շարք նորմերից բխում է, որ վարչապետի խորհրդականի պաշտոնը հանդիսանում է հանրային պաշտոն, որը զբաղեցնելն անհամատեղելի է համարվում փաստաբանական գործունեության հետ և հիմք է հանդիսանում փաստաբանական գործունեության արտոնագրի կասեցման համար:

Նույն գրությամբ Նիկոլայ Բաղդասարյանին տրվել է հարցադրում՝ Պալատին

11 օգոստոսի 2018թ.
թիվ 16/4-Ա

փաստաբանական գործունեության արտոնագրի կասեցման հիմքերի մասին չտեղեկացնելու պատճառների մասին, ինչպես նաև առաջարկվել է ներկայացնել դիրքորոշում՝ իր փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցնելու հարցի կապակցությամբ:

Ի պատասխան նշված գրության Նիկոլայ Բաղդասարյանի կողմից 30.08.2018թ. ներկայացվել է գրավոր դիրքորոշում:

2. <u>Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի դիրքորոշումը.</u>

2.1. Նիկոլայ Բաղդասարյանի գրավոր դիրքորոշումը.

Պալատի աշխատակազմի ղեկավարի 20.07.2018 թվականի թիվ 05/04/1044-18 գրությանն ի պատասխան, փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը նշել է, որ ինքը հանրային ծառայող չի հանդիսանում:

Իր դիրքորոշումը Նիկոլայ Բաղդասարյանը պատճառաբանել է հետևյալով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը՝ անցել է հանրային ծառայության՝ պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավել]}, քան 5 տարի ժամկետով:*

Ըստ Նիկոլայ Բաղդասարյանի՝ վերը նշված հոդվածում առկա բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը անցել է հանրային ծառայության և նա հանդիսանում է պետական կամ համայնքային ծառայող:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող:*

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի պետական և համայնքային: Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:

Ըստ Նիկոլայ Բաղդասարյանի՝ վերը նշված հոդվածների համակարգային վերլուծությունից և դրանցում առկա բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հանրային ծառայողը՝ պետական կամ համայնքային պաշտոնատար անձն է: Այսինքն, եթե անձը չի համարվում պաշտոնատար անձ, նա չի կարող համարվել պետական կամ համայնքային ծառայող, հետևաբար գտնվել հանրային ծառայության մեջ:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հանրապետության նախագահը և վարչապետը կարող են ունենալ նաև հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականներ: (...)

Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները պաշտոնատար անձինք չեն: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն վարձատրվում, չունեն նորմավորված աշխատանքի և աշխատաժամանակի ռեժիմ: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները մասնագիտական խորհրդատվություն են տրամադրում հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի վերաբերյալ (...):

Այսինքն, հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականն, ի տարբերություն ոչ հասարակական հիմունքներով խորհրդականի, չի հանդիսանում պաշտոնատար անձ, հետևաբար՝ նաև չի հանդիսանում պետական կամ համայնքային ծառայող:

Նիկոլայ Բաղդասարյանը նշել է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը բազմաթիվ դրույթներ է պարունակում, որոնք վերաբերվում են հանրային ծառայողի երաշխիքներին, սոցիալական արտոնություններին, կարգավիճակին, որոնք որևէ կերպով չեն վերաբերվում հասարակական հիմունքներով խորհրդականին: Չի կարող հասարակական հիմունքներով խորհրդականը համարվել հանրային ծառայող և որևէ կերպ չօգտվել հանրային ծառայողին վերապահված երաշխիքներից և արտոնություններից, չկրել հանրային ծառայողին օրենքով վերապահված իրավունքներ և պարտականություններ:

2.2. Նիկոլայ Բաղդասարյանի կողմից Պալատի խորհրդի նիստին ներկայացրած դիրքորոշումը.

Նիկոլայ Բաղդասարյանը խորհրդի նիստի ժամանակ էլ ներկայացրել է իր փաստարկները՝ գտնելով, որ իր փաստաբանական գործունեության արտոնագիրը չպետք է կասեցվի, վերոգրյալից բացի, այդ թվում՝ ըստ էության նաև այն հիմքով, որ փաստաբանությամբ զբաղվելուց բացի հասարակական հիմունքներով վարչապետի խորհրդական լինելով կարող է ավելի շատ օգուտ տալ փաստաբանությանը: Մասնավորապես, Նիկոլայ Բաղդասարյանը նշել է՝

«...իմ աշխատանքի մի մասը կապված է նրա հետ, պարոն Ասատրյան տեսեք, որ ես լինելով փաստաբան կարանամ էդ ոլորտը ուսումնասիրեմ, լինելով թեմայի մեջ կարանամ օժանդակեմ պետությանը: Երբ որ դուք փորձում եք հա, պայմանական, բնական է անձամբ դուք չեք, ձեր մասին չի, փորձում եք ինձ սահմանազատեք այն իրողություններից, որոնք տեղի են ունենում դատարանում, այսինքն ես չմասնակցեմ, այսինքն շատ դժվար կլինի էդ գործունեությունը իրականացնել....: [1]*»:*

«...Տեսեք ինչում է խնդիրը, երբ որ դու ամեն օր գնում ես դատարան, երբ որ դու շփվում ես էն բերդերի հետ: Վերջերս մի հատ խնդիր էր բարձրացվել կալանավայրերի հետ, իմ գործառույթը, եթե ես չլինեի փաստաբան և չկարանայի էդ վերջերս լինեի այս բնագավառում ես չէի կարա պատշաճ խորհրդատվություն ասեի, որ իրականությունը սա է, այսինքն պետական պաշտոնատար անձը, որը չեմ ասում բավականին խորը ուսումնասիրում է, ժամերով, տարիներով նստում են: Բայց մի բանա, երբ որ դու պետության աչքերով ես նայում, մի բանա, որ դու նայում ես պարտատիրոջ, այսինքն դու հենց փաստաբանի աչքերով ես նայում և ես համոզված եմ, որ էն, որ ես լինելով փաստաբան և հասարակական

[1] Խորհրդի նիստի ձայնագրառում՝ 01:06:00 – 01:06:23.

հիմունքներով աշխատող, ավելի մեծ օգուտ եմ տալու փաստաբանական պալատին, իրականում ձեզ աչքերով նայում եմ պարզ ասում եմ, քան վնաս կլինի իմ փաստաբանական, իմ գործերով զբաղվելուն:» [2]:

Խորհրդի նիստի ընթացքում Նիկոլայ Բաղդասարյանը՝ պատասխանելով խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի հարցերին, նշել է հետևյալը. *«...բացի փաստաբանությունից, այլ ձեռնարկատիրական գործունեությամբ եմ զբաղվում...»*[3]:

Նիկոլայ Բաղդասարյանի ներկայացուցիչներ Լուսինե Սահակյանը և Երվանդ Վարոսյանը խորհրդի նիստի ընթացքում **<u>բանավոր</u>** կարգով բացարկներ են հայտնել խորհրդի մի քանի անդամներին, որոնք Պալատի խորհուրդը քննարկման առարկա չի դարձրել, քանի որ դրանք չեն բխել Պալատի կանոնադրության 16.19-րդ կետի պահանջից առ այն, որ՝ *եթե Փաստաբանների պալատի խորհրդի նիստում քննարկվում է փաստաբանների պալատի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Փաստաբանների պալատի խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում*: Պալատի խորհրդի անդամները նշված կետի հիմքով քվեարկությանը չմասնակցելու հայտարարություն չեն ներկայացրել:

Հատկանշական է նաև այն, որ Պալատի խորհուրդը նույնիսկ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը» անալոգիայով կիրառելու դեպքում էլ չէր կարող քննարկել Նիկոլայ Բաղդասարյանի ներկայացուցիչների կողմից խորհրդի անդամներին հայտնած բացարկները, քանի որ դրանք ԳՐԱՎՈՐ չեն ներկայացվել, մինչդեռ նշված նշված կարգի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն բացարկը ներկայացվում է գրավոր:

3. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի փաստաբանական գործունեության թիվ 95 արտոնագրի գործողությունը ենթակա է կասեցման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ*:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ***փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը անցել է հանրային ծառայության***՝ *պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով*:

Նիկոլայ Բաղդասարյանի արտոնագրի գործողության կասեցման հարցի

---

[2] Խորհրդի նիստի ձայնագրառում՝ 01:07:16 – 01:08:03.

[3] Խորհրդի նիստի ձայնագրառում՝ 01:02:07 – 01:02:12.

քննարկմանն արդյունքում որոշում կայացնելու համար Պալատի խորհուրդն էական է համարում հետևյալ իրավական հարցադրումները.

1) ***Արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնելը նույնանում է հանրային ծառայության անցնելու կարգավիճակին***.
2) ***Արդյո՞ք վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդականի պաշտոնը հանրային պաշտոն է.***
3) ***Արդյո՞ք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը վերաբերում է միայն պետական և համայնքային ծառայությանը.***
4) ***Արդյո՞ք վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդականի պաշտոն զբաղեցրած փաստաբանը՝ փաստաբանական գործունեության անկախության հետ կապված խնդիր ունի, թե՝ ոչ:***

3.1. Արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնելը նույնանում է հանրային ծառայության անցնելու կարգավիճակին.

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[4] 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և <u>հանրային պաշտոնները</u>*:

<u>Այս նորմից հետևում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը համարվում է հանրային ծառայությանն անցած անձ:</u>

3.2. Արդյո՞ք վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդականի պաշտոնը հանրային պաշտոն է.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *վարչապետը ձևավորում է իր աշխատակազմը, որի խնդիրն է ապահովել վարչապետի և փոխվարչապետների լիազորությունների իրականացումը, այդ թվում՝ Կառավարության նիստերի անցկացումը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարին նշանակում և ազատում է վարչապետը,* ***<u>ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում վարչապետի աշխատակազմի հանրային ծառայության այլ պաշտոններում և ազատում այդ պաշտոններից</u>***:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ *<u>հանրային պաշտոնը</u> դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային,* իսկ *<u>պետական պաշտոնները</u> դասակարգվում են տեսակների՝*

---

[4] Ընդունվել է 23.03.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ., ՀՀՊՏ 2018.03.29/24(1382):

*քաղաքական, վարչական, ինքնավար և **<u>հայեցողական</u>**:*

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *<u>հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է</u>, որն զբաղեցնող անձն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները և պատասխանատվություն է կրում այդ հանձնարարականների կատարման համար*:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *պետական հայեցողական պաշտոններ են … վարչապետի .. խորհրդականի … պաշտոնները*:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ *Հանրապետության նախագահը և վարչապետը կարող են ունենալ նաև հասարակական հիմունքներով **<u>նշանակված</u>** խորհրդականներ: Հանրապետության նախագահի՝ հասարակական հիմունքներով խորհրդականների թիվը չի կարող գերազանցել երկուսը: Վարչապետի համաձայնությամբ փոխվարչապետները և նախարարները կարող են ունենալ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականներ: <u>Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները պաշտոնատար անձինք չեն</u>: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն վարձատրվում, չունեն նորմավորված աշխատանքի և աշխատաժամանակի ռեժիմ: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները մասնագիտական խորհրդատվություն են տրամադրում հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի վերաբերյալ: Վարչապետի՝ հասարակական հիմունքներով խորհրդականները կարող են ընդգրկվել վարչապետի կողմից ստեղծվող հանձնաժողովներում: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն կարող կատարել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված աշխատանքները*:

Այս նորմերից հետևում է, որ ՀՀ վարչապետը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի հիման վրա ՕՐԵՆՔՈՎ լիազորված է ՆՇԱՆԱԿԵԼ հանրային պաշտոնում: Նիկոլայ Բաղդասարյանը ՀՀ վարչապետի որոշմամբ ՆՇԱՆԱԿՎԵԼ է վարչապետի խորհրդականի պաշտոնում:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների համար սահմանել է առանձնահատկություններ, այն է՝ որոշ լիազորություններ և երաշխիքներ կրճատել է, և խորհրդականներին չի համարել պաշտոնատար անձինք, սակայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը կամ որևէ այլ օրենք չի սահմանում, որ **<u>հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականի պաշտոնը հանրային պաշտոն չէ</u>**: Հակառակ դեպքում, կստացվի, որ վարչապետը, ելնելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքից, լիազորված չէ այդպիսի նշանակում կատարել:

Հասարակական հիմունքներով խորհրդականների հետ կապված հարաբերությունները կարգավորող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը վերնագրված է *«Հայեցողական պաշտոնները»*: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: **<u>Հոդվածների</u>***

<u>վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը</u>:

Այս վերնագրին է համապատասխանում նաև նույն հոդվածի 10-րդ մասում նշված հասարակական հիմունքներով «խորհրդականի» պաշտոնը, այն, բնականաբար, բնութագրվելով, որպես **հայեցողական պաշտոն**:

ՀՀ վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի № 564-Լ որոշմամբ հաստատված Վարչապետի աշխատակազմի կանոնադրության 11-րդ կետի համաձայն՝ *վարչապետին անմիջականորեն հաշվետու են աշխատակազմի ղեկավարը, վարչապետի խորհրդականները*..:

Նույն կանոնադրության 20-րդ կետի համաձայն՝ *վարչապետի խորհրդականը՝*

1) կազմում է իր աշխատանքային ծրագիրը և ներկայացնում վարչապետի հավանությանը.

2) իրականացնում է վարչապետի կողմից իրեն հանձնարարված ոլորտի ուսումնասիրություն, պարզում է ոլորտի զարգացման միտումները, վերհանում առկա հիմնահարցերը և առաջարկություններ է ներկայացնում վարչապետին դրանց լուծման ուղղությամբ.

3) պարբերաբար վարչապետին է ներկայացնում իրեն հանձնարարված ոլորտին վերաբերող վերլուծական-խորհրդատվական նյութեր.

4) վարչապետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում իր գործառույթներին վերաբերող հարցերի քննարկմանը.

5) վարչապետի որոշմամբ ղեկավարում է վարչապետի կողմից ստեղծված խորհրդակցական մարմինների գործունեությունը կամ մասնակցում է դրանց աշխատանքներին.

6) վերլուծում է վարչապետի կողմից իրեն մակագրված փոստը և ամփոփ տեղեկատվություն ներկայացնում վարչապետին:

ՀՀ վարչապետի պաշտոնական կայքում՝ **<u>վարչապետի աշխատակազմ բաժնում</u>** ներառված են նաև հասարակական հիմունքներով խորհրդականները, այդ թվում՝ Նիկոլայ Բաղդասարյանը[5]:

Վերը նշված իրավական ակտերի վերլուծությունից հետևում է, որ վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդականի պաշտոնը <u>հանրային պաշտոն է</u> նույնիսկ այն դեպքում, երբ այդ պաշտոնը զբաղեցնող անձը չի համարվում պաշտոնատար անձ:

3.3. Արդյո՞ք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը վերաբերում է միայն պետական և համայնքային ծառայությանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ Նիկոլայ Բաղդասարյանի մեկնաբանությունն այն մասին, որ *«առկա բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը անցել է հանրային ծառայության և նա հանդիսանում է պետական կամ*

[5] http://www.gov.am/am/staff-structure/

համայնքային ծառայող», Պալատի խորհուրդը հիմնավոր չի համարում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Նշված նորմի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը անցել է հանրային ծառայության՝* ***<u>պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով</u>****, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով*:

Այս նորմից հետևում է, որ օրենսդրի կողմից հանրային ծառայության տեսակներից պետական և համայնքային ծառայության հատուկ շեշտադրումը կատարվել է միայն ժամկետի մասով: Այս նորմի հակառակ մեկնաբանության դեպքում, կստացվի, որ պետական կամ համայնքային հանրային պաշտոններ (**<u>քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական</u>**) զբաղեցնելը համատեղելի է փաստաբանական գործունեության հետ, քանի որ դրանք չեն ներառվում պետական կամ համայնքային ծառայության մեջ: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ինքնավար պաշտոններ են նաև դատավորների, դատախազների և քննիչների պաշտոնները: Այդ տրամաբանությամբ ղեկավարվելու դեպքում, փաստաբանը կարող է առանց իր արտոնագրի գործողությունը կասեցնելու աշխատել դատավորի, դատախազի կամ քննիչի պաշտոնում, ինչն անթույլատրելի է:

3.4. Արդյո՞ք վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդականի պաշտոն զբաղեցրած փաստաբանը՝ փաստաբանական գործունեության անկախության հետ կապված խնդիր ունի, թե՝ ոչ.

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը նույնպես երաշխավորվում է փաստաբանության անկախությունը:

Ըստ այդ հոդվածի՝ «*Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, <u>չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ</u>:*

<u>Փաստաբանությունը գործում է անկախության</u>, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:»:

Այս պայմաններում, գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ վարչապետի խորհրդական հանդիսացող փաստաբանի կողմից փաստաբանական գործունեություն իրականացնելը համատեղելի համարելու դեպքում, վերջինս հնարավորություն կունենա՝

- մասնակցել քրեական գործերով հետաքննության փուլին՝ ոստիկանության և ԱԱԾ մարմիններում, այն դեպքում, երբ այս մարմինները գործում են վարչապետի ենթակայության ներքո.
- մասնակցել քրեական գործերով հետաքննության և նախաքննության փուլերին՝ հարկային և մաքսային մարմիններում, այն դեպքում, երբ այս մարմինները գործում են կառավարության ենթակայության ներքո.
- մասնակցել քրեական գործերով նախաքննության փուլերին՝ քննչական և հատուկ քննչական մարմիններում, այն դեպքում, երբ այս մարմինների ղեկավարներին նշանակում և ազատում է կառավարությունը՝ վարչապետի ներկայացմամբ:

Հատկանշական է, որ շահերի բախում կարող է առաջանալ նաև այն դեպքերում, երբ Նիկոլայ Բաղդասարյանը կներկայացնի իր վստահորդի շահերը ընդդեմ Հայաստանի Հանրապետության կամ պետական մարմինների:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.1 կետի համաձայն՝ *իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում, և դատավարությունների ժամանակ*:

Փաստաբանի անկախության մասով Պալատի խորհրդի մտահոգությունը հաստատվում է նաև Նիկոլայ Բաղդասարյանի՝ խորհրդի նիստի ժամանակ ներկայացվող հետևյալ դիրքորոշմամբ. «… *տեսեք, որ ես լինելով փաստաբան կարանամ էդ ոլորտը ուսումնասիրեմ, լինելով թեմայի մեջ կարանամ օժանդակեմ պետությանը: Երբ որ դուք փորձում եք հա, պայմանական, բնական է անձամբ դուք չեք, ձեր մասին չի, փորձում եք ինձ սահմանազատեք այն իրողություններից, որոնք տեղի են ունենում դատարանում, այսինքն ես չմասնակցեմ, այսինքն շատ դժվար կլինի էդ գործունեությունը իրականացնել:*»:

Հաշվի առնելով նաև Նիկոլայ Բաղդասարյանի վերոհիշյալ պարզաբանումները, Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Նիկոլայ Բաղդասարյանի կողմից վարչապետի խորհրդականի կարգավիճակով և վարչապետի խորհրդականի գործառույթների զուգորդմամբ փաստաբանական գործունեություն իրականացնելը փաստաբանի անկախության սկզբունքի հետ բախում է առաջացնում: ***<u>Փաստաբանը չի կարող իր վստահորդի շահերը պաշտպանելու կամ փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններին իրազեկ լինելու հաշվին օժանդակել պետությանը:</u>*** Փաստաբանը կաշկանդված չէ փաստաբանական ծառայություններ մատուցել պետական մարմիններին կամ պետությանը՝ պայմանագրի հիման վրա, պատվիրատու-վստահորդ փոխհարաբերությունների շրջանակներում, սակայն չի կարող հանրային պաշտոն զբաղեցնելով շարունակել փաստաբանական գործունեություն իրականացնել:

Նիկոլայ Բաղդասարյանի այն փաստարկը կամ ակնարկը, որ ՀՀ

վարչապետն ունի նաև հասարակական հիմունքներով այլ խորհրդականներ և իր արտոնագրի գործողությունը կասեցնելու դեպքում Պալատի խորհրդի որոշումը կարող է ազդել նաև նրանց կարգավիճակի վրա, Պալատի խորհուրդը հիմնավոր չի համարում, քանի որ խնդիրը քննարկվում է բացառապես «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի տեսակետից և Պալատի խորհրդի որոշումը չի կարող վերաբերվել փաստաբանի կարգավիճակ չունեցող այլ անձանց: Նույն պատճառաբանությամբ, Պալատի խորհուրդը որևէ խնդիր չի տեսնում, եթե Նիկոլայ Բաղդասարյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի թույլատրած սահմաններում այլ ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնի:

Պալատի խորհուրդն ընդգծում է, որ փաստաբանական գործունեության հետ անհամատեղելի պաշտոնը կամ կարգավիճակը պայմանավորված չէ այդ պաշտոնը զբաղեցնող կամ կարգավիճակն ունեցող անձի կողմից վարձատրություն ստանալու փաստով: Դրա մասին է վկայում նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջն առ այն, որ՝ ***փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը ընտրվել է պետական ընտրովի մարմիններում, համայնքի ղեկավարի կամ ավագանու պաշտոնում՝ իր լիազորությունների ժամկետով***: Համայնքի ավագանու անդամը չի վարձատրվում (աշխատավարձ չի ստանում) իր գործառույթների դիմաց:

Վերոգրյալն ամփոփելով Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից Հանրապետության վարչապետի հասարակական կամ հիմնական (հաստիքային) հիմունքներով խորհրդականի պաշտոն զբաղեցնելն առաջացնում է փաստաբանական գործունեության հետ անհամատեղելի իրավիճակ, ինչի հաշվառմամբ բոլոր դեպքերում փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը պետք է կասեցնել:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանն ի խախտումն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի առ այն, որ *սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության մասին փաստաբանը պարտավոր է տասնօրյա ժամկետում տեղյակ պահել փաստաբանների պալատի խորհրդին*, Պալատի խորհրդին չի տեղեկացրել իր հանրային պաշտոն զբաղեցնելու փաստի և հիմքի մասին:

Պալատի խորհուրդը գտնում է նաև, որ Նիկոլայ Բաղդասարյանի արտոնագրի գործողությունը կասեցնելու մասին որոշումը պետք է հրապարակել Պալատի կայքում, քանի որ Նիկոլայ Բաղդասարյանի կողմից հանրային պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները Պալատը ստացել է հրապարակային աղբյուրներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ*:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ

օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 38-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 (8) և 16.9 կետերի պահանջներով,

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի փաստաբանական գործունեության թիվ 95 արտոնագրի գործողությունը կասեցնել:

2. Ընդունել ի գիտություն, որ փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կարող է կասեցվել ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով:

3. Հանձնարարել Պալատի խորհրդի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել Նիկոլայ Բաղդասարյանին, ինչպես նաև սույն որոշումը հրապարակել Պալատի կայքում:

Ծանոթություն: *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նիկոլայ Բաղդասարյանի կողմից այն ստանալու կամ պատշաճ իրազեկվելու օրվան հաջորդող օրվանից:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ 16/4-Ա
ք. Երևան